ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/49

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթ, խավիարի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԲՄԱՊՁԲ-7/2-1»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2893-2021 գրությամբ «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.02.2021թ. թիվ ՊՆ/Պն/02/901-2021 գրության հիման վրա, 01.03.2021թ.-ին «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 01.03.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 01.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/49 համարի ծածկագիրը:

11.03.2021թ.-ին, 19.03.2021թ.-ին, 26.03.2021թ.-ին և 31.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 31.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 31.03.2021թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 24.02.2021թ. թիվ ՊՆ/Պն/02/901-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է ԲՄԱՊՁԲ-7/2-1 գնման պայմանագրին կից 13.07.2020թ կնքված փոխադարձ համաձայնությամբ լուծելու մասին համաձայնագիրը /լուծման մասին ծանուցումը հրապարակվել է gnumner.am կայքում 25.01.2021թ./, սակայն հաշվի առնելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2021/28 որոշումը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. փետրվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է նաև N ԲՄԱՊՁԲ-7/2-1 պայմանագիրը՝ հիմք ընդունելով N ԲՄԱՊՁԲ-7/2-1 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 22.02.2021թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 03.03.2021թ.-ի գրությամբ դիմել է «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2893-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 15.03.2021թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 20.02.2019թ. կնքվել է պետության կարիքների համար ապրանքի մատակարարման «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Նշված պայմանագրի համաձայն՝ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից 2019-2021թթ. ընթացքում պետք է իրականացվեր 1-3 չափաբաժիններով նախատեսված ապրանքատեսակների մատակարարումը՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով նախատեսված ժամկետում:

Վերոհիշյալ պայմանագրի հիման վրա՝ 2019-2020թ. ընթացքում կնքվել են մի շարք համաձայնագրեր:

Մասնավորապես, Պայմանագրի հիման վրա 13.07.2020թ. կնքված համաձայնագրի համաձայն՝ 2020թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին պետք է մատակարարվեր ընդհանուր 45 000 կգ. խավիար:

ՀՀ պաշտպանության նախարարությունը «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ին 16.11.2020թ. ուղղված թիվ ՆՏԱ/5667 գրությամբ հայտնել է, որ «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պայմանագրի շրջանակներում՝ ՍՊԸ-ն 2020թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին պետք է մատակարեր ընդհանուր 45 000 կգ. խավիար, որից ս.թ. նոյեմբերի 10-ի դրությամբ դեռևս ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է 29 764 08 կգ. խավիար: Նույն գրությամբ հայտնվել է, որ մինչև ս.թ. նոյեմբերի 30-ը վերոհիշյալ ապրանքատեսակի չմատակարարած 15 235.92 կգ. խավիարը չմատակարարելու դեպքում՝ ՀՀ ՊՆ կլուծի նշված պայմանագիրը:

Ի պատասխան ՀՀ ՊՆ վերոհիշյալ գրության՝ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն 17.11.2020թ. առաջարկել է, հիմք ընդունելով ռազմական դրությունը, երկկողմանի, փոխադարձ համաձայնությամբ լուծել պայմանագիրը՝ չմատակարարված խավիարի մասով:

ՀՀ ՊՆ-ն «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ին 26.11.2020թ. ուղղված թիվ ՆՏԱ/5847 գրությամբ մերժել է ՍՊԸ-ի առաջարկը՝ փոխադարձ համաձայնությամբ, երկկողմանի լուծել «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պայմանագիրը: Որպես փաստարկ՝ նշված գրությամբ նշվել է, որ ՍՊԸ-ն ՀՀ ՊՆ-ին ուղղված 15.05.2020թ. գրությամբ հրաժարվել է «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պայմանագրի ՀՀ ՊՆ առաջարկով փոխադարձ լուծելու հնարավորությունից՝ հայտնելով, որ 38 000 կգ. խավիար արդեն արտադրված է և առաջարկել է այն մատակարարել:

«Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ին 07.12.2020թ. ուղղված գրությամբ (կցվում է) ՀՀ ՊՆ-ին հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 20.02.2019թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պայմանագրի 7-րդ բաժնի (ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)) համաձայն՝ պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Ինչպես հայտնի է, Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենը 2020 թվականի մարտի 13-ին արված համապատասխան հայտարարությամբ կորոնավիրուսի համաճարակը որակվել է որպես պանդեմիա:

Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության կողմից 2020թ. մարտի 16-ին ընդունվեց թիվ 298-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին: Վերոհիշյալ որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով հայտարարվեց արտակարգ դրություն:

Այնուհետև, ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ նշված ժամկետը երկարաձգվեց մինչև 2020թ. սեպտեմբերի 11-ը:

Այնուհետև, ՀՀ կառավարության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին ընդունվեց թիվ 1586-Ն որոշումը՝ ՀՀ-ում ռազմական դրություն հայտարարելու մասին, որը գործում է մինչ օրս:

Ինչպես արդեն հայտնել էինք Ձեզ 17.11.2020թ. ուղղված գրությամբ, 15 235.92 կգ. խավիար չի մատակարարվել, քանի որ 27.09.2020թ. հայտարարված ռազմական դրությամբ պայմանավորված ՍՊԸ-ի մի շարք աշխատակիցներ (այդ թվում խավիարի գծով նյութատեխնիկական պատասխանատու անձը) կամավորագրվել են և մեկնել Արցախ: Աշխատակիցների մեջ ունեցել ենք նաև COVID 19 հիվանդության դեպքեր և համապատասխանաբար ինքնամեկուսացողներ: Վերոհիշյալով պայմանավորված՝ սմբուկի մթերում տեղի չի ունեցել, ինչի արդյունքում խավիարի մնացած մասի արտադրությունը դարձել է անհնար:

Ինչ բերաբերում է Ձեր մատնանշած ՍՊԸ-ի կողմից արտադրած 38 000 կգ. խավիարի փաստին, որը Ընկերությունը պատրաստ է եղել մատակարարել, ապա այս մասով հայտնում ենք, որ համապատասխան լաբորատոր փորձարկման արդյունքում պարզվել է, որ արտադրված վերոհիշկալ խմբաքանաը չի համապատասխանել Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված որոշ պարամետրերին, ինչի հիման վրա որոշում է կայացվել այդ արտադրանքը չմատակարել ՀՀ ՊՆ-ին՝ պայմանագրի տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառով:

Այսպիսով, Պայմանագրի 7-րդ բաժինը իրավունք է վերապահում կողմին միակողմանի լուծել պայմանագիրը, եթե պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելը եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

հետևանքով, որը ծագել է տվյալ պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Պայմանագրով անհաղթահարելի ուժ է համարվել ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը:

Նույն բաժինը նախատեսել է, որ եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Փաստորեն, ՀՀ պաշտպանության նախարարության և «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև պետության կարիքների համար ապրանքի մատակարարման «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պայմանագիրը 20.02.2019թ. կնքելուց հետո՝ կողմերի համար անկանխատեսելիորեն, ՀՀ կառավարության 2020թ. մարտի 16-ին թիվ 298-Ն որոշմամբ հայտարարվել է արտակարգ դրություն, որը գործել է մինչև 2020թ. սեպտեմբերի 11-ը:

Այնուհետև, ՀՀ կառավարության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին ընդունվել է թիվ 1586-Ն որոշումը՝ ՀՀ-ում ռազմական դրություն հայտատարելու մասին, որը մինչ օրս գործում է:

Վերոհիշյալը փաստում է, որ «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պայմանագիրը 20.02.2019թ. կնքելուց հետո՝ կողմերի համար անկանխատեսելիորեն, 2020թ. մարտի 16-ից, իսկ այնուհետև սեպտեմբերի 27-ից առաջացել է անհաղթահարելի ուժի ազդեցություն, որը տևել է ավելի, քան երեք ամիս:

Նման պարագայում Պայմանագրի 7-րդ բաժնով նախատեսված անհաղթահարելի ուժի ազդեցության (ֆորս-մաժոր) պայմաններում «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն չի կարող պատասխանատվություն կրել չկատարած մասով իր պայմանագրային պարտավորության ոչ պատշաճ կատարման համար, քանի որ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով նշված պարտավորության կատարումը դարձել է անհնարին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Պայմանագրի 7-րդ բաժնի պահանջներով՝ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն միակողմանի մասնակի լուծում է ՀՀ պաշտպանության նախարարության և «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 20.02.2019թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պայմանագիրը՝ չմատակարարված խավիարի մասով:

Խնդրում ենք սույն գրությունը ընդունել որպես ծանուցում՝ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պայմանագիրը՝ չմատակարարված խավիարի մասով, միակողմանի լուծելու վերաբերյալ»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը իր հերթին 2021թ. հունվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է, ըստ էության, ՍՊԸ-ի կողմից գրեթե երկու ամիս առաջ լուծած, ԲՄԱՊՁԲ-7/2-1 գնման պայմանագրին կից 13.07.2020թ կնքված համաձայնագիրը /լուծման մասին ծանուցումը հրապարակվել է gnumner.am կայքում 25.01.2021թ./,

Այնուհետև համապատասխան հիմքերը ուղարկվել են ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար /թիվ ՍՑ-ՆԳ-2021/28/:

Վերը նշված ընթացակարգը գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի կողմից մերժվել է և հետևաբար «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն չի ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված որոշման հիմքում դրվել է այն հիմնավորումը, որ մասնակիցը ընդգրկվում է Ցուցակու, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Մինչդեռ գործի փաստերից ակնահայտ է դառնում, որ Համաձայնագիրը լուծելու պայմաններում վրա չի հասնում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի <<ա>> ենթակետով նախատեսված հիմքը, որը պահանջում է, որպեսզի լուծվի պայմանագիրը, ոչ թե համաձայնագիրը:

Թիվ ՍՑ-ՆԳ-2021/28 ծածկագրով ընթացակարգի որոշման հրապարակումից հետո՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, հիմք ընդունելով գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից կայացրած որոշումը, որոշել է գնման պայմանագիրը լուծել ևս մեկ անգամ և համապատասխան հիմքերն ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

«Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ին 22.02.2021թ. ուղղված գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից կայացրած որոշումը, միակողմանի մասնակի լուծում է նաև 20.02.2019թ.-ին կնքված թիվ ««ԲՄԱՊՁԲ-7/2-1»» ծածկագրով պետական գնման պայմանագիրը՝ նշված ապրանքատեսակի մասով:

Վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 22.02.2021թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Այնուհետև, համապատասխան հիմքերը կրկին ուղարկվել են ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ին նույն խախտումը թույլ տալու հիմքով կրկին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար /թիվ ՍՑ-ԼՕ-2021/49/:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Գտնում ենք, որ առկա չէ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը, որի համաձայն «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն պետք է ներառվի Ցուցակում հետևյալ հիմնավորմամբ.

ա) Նախ, գտնում ենք, որ ստորև ներկայացված օբյեկտիվ պատճառներով պայմանավորված բացակայում է «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից նշված պայմանագրային պարտավորության չկատարման համար մեղքի առկայությունը:

Մասնավորապես, Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և

գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականություն-ները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար

պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 20.02.2019թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պայմանագրի 7-րդ բաժնի (ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)) համաձայն՝ պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը

շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Ինչպես հայտնի է, Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենը 2020 թվականի մարտի 13-ին արված համապատասխան հայտարարությամբ կորոնավիրուսի համաճարակը որակվել է որպես պանդեմիա:

Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության կողմից 2020թ. մարտի 16-ին ընդունվեց թիվ 298-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին: Վերոհիշյալ որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով հայտարարվեց արտակարգ դրություն:

Այնուհետև, ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ նշված ժամկետը երկարաձգվեց մինչև 2020թ. սեպտեմբերի 11-ը:

Այնուհետև, ՀՀ կառավարության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին ընդունվեց թիվ 1586-Ն որոշումը՝ ՀՀ-ում ռազմական դրություն հայտարարելու մասին, որը գործում է մինչ օրս:

Բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ 15 235.92 կգ. խավիար չի մատակարարվել, քանի որ 27.09.2020թ. հայտարարված ռազմական դրությամբ պայմանավորված ՍՊԸ-ի մի շարք աշխատակիցներ (այդ թվում խավիարի գծով նյութատեխնիկական պատասխանատու անձը) կամավորագրվել են և մեկնել Արցախ: Աշխատակիցների մեջ ունեցել ենք նաև COVID 19 հիվանդության դեպքեր և համապատասխանաբար ինքնամեկուսացողներ: Վերոհիշյալով պայմանավորված՝ սմբուկի մթերում տեղի չի ունեցել, ինչի արդյունքում խավիարի մնացած մասի արտադրությունը դարձել է անհնար:

Այսպիսով, Պայմանագրի 7-րդ բաժինը իրավունք է վերապահում կողմին միակողմանի լուծել պայմանագիրը, եթե պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելը եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է տվյալ պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Պայմանագրով անհաղթահարելի ուժ է համարվել ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը:

Նույն բաժինը նախատեսել է, որ եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Փաստորեն, ՀՀ պաշտպանության նախարարության և «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև պետության կարիքների համար ապրանքի մատակարարման «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պայմանագիրը 20.02.2019թ. կնքելուց հետո՝ կողմերի համար անկանխատեսելիորեն, ՀՀ կառավարության 2020թ. մարտի 16-ին թիվ 298-Ն որոշմամբ հայտարարվել է արտակարգ դրություն, որը գործել է մինչև 2020թ. սեպտեմբերի 11-ը:

Այնուհետև, ՀՀ կառավարության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին ընդունվել է թիվ 1586-Ն որոշումը՝ ՀՀ-ում ռազմական դրություն հայտարարելու մասին, որը մինչ օրս գործում է:

Վերոհիշյալը փաստում է, որ «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պայմանագիրը 20.02.2019թ. կնքելուց հետո՝ կողմերի համար անկանխատեսելիորեն, 2020թ. մարտի 16-ից, իսկ այնուհետև սեպտեմբերի 27-ից առաջացել է անհաղթահարելի ուժի ազդեցություն, որը տևել է ավելի, քան երեք ամիս:

Նման պարագայում Պայմանագրի 7-րդ բաժնով նախատեսված անհաղթահարելի ուժի ազդեցության (ֆորս-մաժոր) պայմաններում «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն գրավոր հայտնել է ՀՀ ՊՆ-ին, որ չի կարող պատասխանատվություն կրել չկատարած մասով իր պայմանագրային պարտավորության ոչ պատշաճ կատարման համար, քանի որ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով նշված պարտավորության կատարումը դարձել է անհնարին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Պայմանագրի 7-րդ բաժնի պահանջներով՝ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն միակողմանի մասնակի լուծել է ՀՀ պաշտպանության նախարարության և «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 20.02.2019թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պայմանագիրը՝ չմատակարարված խավիարի մասով: Միևնույն ժամանակ, ՍՊԸ-ն հայտնել է, որ խնդրում է վերոհիշյալ գրությունը ընդունել որպես ծանուցում՝ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պայմանագիրը՝ չմատակարարված խավիարի մասով, միակողմանի լուծելու վերաբերյալ»:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, գալիս ենք այն եզրահանգման, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունն անպատշաճ կատարելու

համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, գտնում ենք, որ այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Հավելենք նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները:

Շարադրված փաստերը վկայում են, որ այստեղ առկա է եղել ֆորսմաժորային իրավիճակ, որի պայմաններում ՍՊԸ-ն զրկվել է հնարավորությունից պարտավորությունների պատշաճ կատարելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը (տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՍՊԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):

Գտնում ենք, որ վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված (Պայմանագրի 7-րդ բաժնով նախատեսված ֆորսմաժորային իրավիճակ), հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին, որպիսի պայմաններում բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը:

Գտնում ենք, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Բողոքներ քննող անձին նաև խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ ՀՀ ՊՆ փաստացիորեն գրեթե երկու ամիս անց լուծել է «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի 7-րդ բաժնի հիմքով արդեն իսկ լուծած պայմանագիրը՝ որևիցե ձևով չարձագանքելով պայմանագրի լուծման ՍՊԸ-ի գրությանը:

բ) Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ նույն հիմքով, այսինքն պայմանագրով նախատեսված պարտավորությունը՝ ընդհանուր 15 235.92 կգ. խավիարը չմատակակարելու հիմքով ընթացակարի հիմքերը ՀՀ ՊՆ կողմից ներկայացվել են երկու անգամ:

Փաստացիորեն, «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն նույն խախտումը թույլ տալու հիմքով երկու անգամ/կրկնակի ենթարկվում է պատասխանատվության:

Մինչդեռ, նախ, պայմանագրով նախատեսված պարտավորության խախտումը մասնակցի կողմից արձանագրվել է ՀՀ ՊՆ կողմից դեռևս 2021թ. դեկտեմբերի 22-ին և հրապարակվել պաշտոնական տեղեկագրում 25.01.2021թ., որի արդյունքում լուծվել է 13.07.2020թ կնքված թիվ 1 Համաձայնագիրը:

Այլ կերպ ասած, ՀՀ ՊՆ ևս մեկ անգամ նույն հիմքով, բայց այս անգամ 22.02.2021թ. լուծելով պայմանագիրը՝ խախտել է Կարգի 45-րդ կետով սահմանված 5 օրյա ժամկետը, քանի որ նշված հիմքը առաջացել է ոչ թե 22.02.2021թ. Պայմանագիրը լուծելով, այլ դեռևս 2020թ.-ի հունվարի 22-ին, երբ առաջին փուլով լուծվել է Համաձայնագիրը: Պայմանագիրը լուծելով՝ լուծման գործընթացը դարձել է ընդամենը ամբողջական, սակայն լուծման գործընթացի սկիզբ է հանդիսանում 22.01.2021թ. համապատասխան ծանուցումը պաշտոնական տեղեկագրում հրապարակելը:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ այս նույն հիմքերը, այսինքն թույլ տված նույն խախտումը (ընդհանուր 15 235.92 կգ. խավիարը չմատակակարելը) արդեն իսկ դարձել է պատասխանատվության հիմք և քննության առարկա գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի կողմից թիվ ՍՑ-ՆԳ-2021/28 ընթացակարգի շրջանակներում, և դրա արդյունքում կայացրած որոշմամբ Գ.Ներսիսյանը մերժել է «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգը:

Նույն հիմքով ընթացակարգը նախաձեռնելու պայմաններում գտնում ենք, որ անձը նույն արարքի համար կրկին ենթարկվում է պատասխանատվության, ինչը հանդիսանում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքների խախտում:

Օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանը 18.02.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1139 որոշմամբ գտել է, որ պետք է բացառել հարկային և վարչական պատասխանատվության ենթակա որևէ իրավասուբյեկտի՝ իր իրավական կարգավիճակով պայմանավորված հանգամանքներով կրկնակի պատասխանատվության ենթարկվելու հնարավորությունը: Ըստ ՍԴ-ի՝ ներկա իրավակար-գավորումների շրջանակներում նույնպես այս մոտեցումը պետք է դրվի իրավակիրառական պրակտիկայի հիմքում:

դ) Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ այստեղ առկա չէ նաև Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի <<ա>> ենթակետով նախատեսված հիմքը: Մասնավորապես, «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ին 22.02.2021թ. ուղղված գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից կայացրած որոշումը, միակողմանի մասնակի լուծում է նաև 23.12.2019թ.-ին կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պետական գնման պայմանագիրը՝ նշված ապրանքատեսակի մասով:

Փաստորեն, այս անգամ էլ Պայմանագիրը միակողմանի լուծելու համար հիմք է հանդիսացել բողոքներ քննող անձի որոշումը: Մինչդեռ, Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի <<ա>> ենթակետը պահանջում է, որ պայմանագրի միակողմանի լուծման համար հիմք հանդիսանա պայմանագային պարտավորության խախտումը, բայց ոչ բողոքը քննող անձի որոշումը:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած

պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2021/49 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի միջև 20.02.2019թ.-ին կնքվել է թիվ «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ մատակարարումը պետք է իրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով նախատեսված ժամկետում:

iv. Պատվիրատուի և «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի միջև 18.03.2020թ.-ին կնքվել է թիվ «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 2 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

v. Պատվիրատուի և «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի միջև 13.07.2020թ.-ին կնքվել է թիվ «ԲՄԱՊՁԲ-7/2-1» գնման պայամանգիրը փոխադարձ համաձայնությամբ մասնակի լուծելու մասին Համաձայնագիրը:

vi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 22.02.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 22.02.2021թ.-ի թիվ ՆՏԱ/616 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի միջև 20.02.2019թ-ին կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով՝ կից 18.03.2020թ.-ին կնքված թիվ 2 համաձայնագրի և 13.07.2020թ.-ին կնքված փոխադարձ համաձայնությամբ լուծելու մասին համաձայնագրի շրջանակներում Ընկերությունը 2020թ.-ի օգոստոս ամսին պետք է

մատակարարեր 7200 կգ պահածոյացված բանջարեղեն (խավիար), որից չի մատակարարել 835.92 կգ պահածոյացված բանջարեղեն (խավիար), հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին պետք է մատակարարեր 14400 կգ պահածոյացված բանջարեղեն (խավիար), սակայն չի մատակարարել: ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.01.2021թ.-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը վերը նշված ապրանքների մասով /լուծման մասին ծանուցումը հրապարակվել է www.gnumner.am կայքում 25.01.2021թ./, սակայն հաշվի առնելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2021/28 որոշումը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.02.2021թ.-ին միակողմանի մասնակի լուծել է նաև թիվ «ԲՄԱՊՁԲ-7/2-1» պայմանագիրը՝ վերը նշված ապրանքների մասով՝ հիմք ընդունելով թիվ «ԲՄԱՊՁԲ-7/2-1» գնման պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները:

vii. Մասնակիցը 07.12.2020թ.-ին Պատվիրատուին ուղղված գրությամբ, վերջինիս ծանուցել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին:

viii. Նշված ծանուցումը Մասնակցի h.a.n.s.-food1@mail.ru էլ. փոստի հասցեից 17.12.2020թ.-ին ուղարկվել է Պատվիրատուի logdep@mil.am էլ. հասցեին:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2893-2021 գրությամբ «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը

կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից

հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 529-րդ հոդվածի 4-րդ մասը, համաձայն որի՝ կողմերի համաձայնությամբ կարող են նախատեսվել մատակարարման պայմանագիրը միակողմանի փոփոխելու կամ այն կատարելուց միակողմանի հրաժարվելու այլ հիմքեր:

Նույն օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրացուցային օրից ավելի, պայմանագրով սահմանված ժամկետից:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել

մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի միջև 20.02.2019թ.-ին կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ Մասնակիցը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը պետք է իրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով նախատեսված ժամկետում: Պատվիրատուի և «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի միջև 18.03.2020թ.-ին կնքվել է թիվ «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով պետական

գնման պայմանագրի թիվ 2 Համաձայնագիրը, ապա կողմերի միջև 13.07.2020թ.-ին կնքվել է թիվ «ԲՄԱՊՁԲ-7/2-1» գնման պայամանգիրը փոխադարձ համաձայնությամբ մասնակի լուծելու մասին Համաձայնագիրը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի միջև 20.02.2019թ-ին կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-7/2-1» ծածկագրով՝ կից 18.03.2020թ.-ին կնքված թիվ 2 համաձայնագրի և 13.07.2020թ.-ին կնքված փոխադարձ համաձայնությամբ լուծելու մասին համաձայնագրի շրջանակներում Ընկերությունը 2020թ.-ի օգոստոս ամսին պետք է մատակարարեր 7200 կգ պահածոյացված բանջարեղեն (խավիար), որից չի մատակարարել 835.92 կգ պահածոյացված բանջարեղեն (խավիար), հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին պետք է մատակարարեր 14400 կգ պահածոյացված բանջարեղեն (խավիար), սակայն չի մատակարարել: ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.01.2021թ.-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը վերը նշված ապրանքների մասով /լուծման մասին ծանուցումը հրապարակվել է www.gnumner.am կայքում 25.01.2021թ./, սակայն հաշվի առնելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2021/28 որոշումը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.02.2021թ.-ին միակողմանի մասնակի լուծել է նաև թիվ «ԲՄԱՊՁԲ-7/2-1» պայմանագիրը՝ վերը նշված ապրանքների մասով՝ հիմք ընդունելով թիվ «ԲՄԱՊՁԲ-7/2-1» գնման պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 22.02.2021թ.-ին հրապարակելով Պայմանագրի միակողմանի լուծման մասին 22.02.2021թ.-ի թիվ ՆՏԱ/616 ծանուցումը:

Մասնակիցը 07.12.2020թ.-ին h.a.n.s.-food1@mail.ru էլ. փոստի հասցեից Պատվիրատուի logdep@mil.am էլ. հասցեին ուղարկված գրությամբ, վերջինիս ծանուցել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մինչև Պատվիրատուի կողմից կողմերի միջև կնքված Համաձայնագրի (երի), ինչպես նաև հետագայում՝ Պայմանագրի միակողմանի լուծումը, Մասնակիցը, օգտվելով Պայմանագրի 7-րդ կետով սահմանված իր իրավունքից, լուծել է այն՝ 07.12.2021թ.-ին Պատվիրատուին ներկայացնելով Պայմանագրի միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Բողոքներ քննող անձը, Մասնակցի՝ Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը, ըստ այդմ՝ պայմանագրից հրաժարվելուն ուղղված գործողությունները, քննարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված

դրույթների համատեքստում, հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի գործություններն իրավաչափ են ու ելել են Օրենսգրքի նշված հոդվածի դրույթներից, համաձայն որոնց՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Սույն դեպքում, Պայմանագրից հրաժարվելու հնարավորությունը սահմանվել է նույն պայմանագրի 7-րդ կետով և սահմանվել են այն դեպքերը, որոնց առկայության դեպքում Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Նույն կետով սահմանվել է նաև, որ եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն, ՀՀ կառավարության 11.09.2020թ.-ի «կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» և ՀՀ կառավարության 27.09.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշումները, փաստում է, որ ստեղծված ֆորս-մաժորային իրավիճակներով պայմանավորված Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրն իրավունք ուներ լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ն, հիմք ընդունելով Պայմանագրի 7-րդ կետով սահմանված դրույթները, մինչև պատվիրատուի կողմից պայմանագրի (համաձայնագրի) միակողմանի լուծման մասին ծանուցումը www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում հրապարակելը, 07.12.2020թ.-ին Պատվիրատուին ուղարկված գրությամբ, վերջինիս ծանուցել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին՝ դրանով իսկ միակողմանի հրաժարվելով պայմանագիրը մասնակի կատարելուց:

Ուստի, վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2021թ.-ի թիվ 26/26-1/2893-2021 գրությամբ «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/49 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**